չունին այն իմաստը, որ տրամադիր է տալ Պ. Մանանդեան: Եւ ինչ որ զարմանալի է, բերում է Փարպեցուց մի վկայութիւն, եւ միամտօրէն կարծում է որ այդ հաստատում է իր տեսութիւնը: Պարսից թագաւորը հրամայում է Աբրահամ եւ Խորէն երէցներին երթալ Ասորեստան, որ այնտեղ «մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն եւ ի հարկի կայցեն մինչեւ ցվախճանս իւրեանց:» Թագաւորի պատուէրը կատարւում է եւ երկու երէցների ականջները կտրում են եւ դրկում Ասորեստան «կալ անդ նոցա ի հարկի եւ առնել մշակութիւն:»

Խորէնը մեռնում է աքսորում, իսկ Աբրահամը տեղացի քրիստոնեաների երաշխաւորութեամբ «որք զտունս իւրեանց եւ զարարս փոխանակ ընդ հարկի նորա դրեցին յարքունիս ցվախճան նորա, եւ կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորա,» արձակւում է եւ դալիս Հայաստան:

Պ. Մանանդեանի ըմբռնումով ի հարկի կալ նշանակում է հարկ տալ: Ասել է թէ հայ աքսորական քահանաները ոչ միայն արքունի մշակութիւն պիտի անէին, այլ եւ պարտաւոր էին հարկ տալ եւ ահա այդ հարկատուութիւնից նրանց ազատելու համար Ասորեստանի հաւատացեալները դրաւ են դնում կամ երաշխիք առաջարկում իրենց գոյքը:

Արդոյ բանասէրը այսպէս մտածելով, մեղանչում է ոչ միայն տառի, այլ եւ իմաստի դէմ: Արդարեւ, ով է տեսել, որ տաժանակիր աշխատանքի դատապարտուած աքսորականները դեռ հարկ էլ տան եւ ի՞նչ միջոցներից: Փարպեցին աւելի զգաստ է քան խորհում է Պ. Մանանդեան եւ սիրահար չէ անհեթեթութեանց: Նա պատմում է, որ աքսորեալ խեղճ երէցները ապրուստի միջոց չունէին եւ նրանց պիտոյքները հոգում էին տեղացի քրիստոնեաները յօժարակամ ընծայաբերութեամբ: Ուրեմն ո՞րտեղից պիտի վճարէին այդ թշուառականները պետական հարկ, եւ ինչո՞ւ պիտի վճարէին, քանի որ հոգեւորական լինելով չէին պատկանում հարկատու դասին:

Պարզ է որ խօսքը հարկի մասին չէ եւ չէ կարող լինել:

«Ի հարկի կալ,» տեսանք, որ Ս. Գրքում նշանակում է ծառայել, մարմնաւոր աշխատանք կատարել, համաձայն յոյն ergomai: Պատմագիրն ինքը մեկնում է՝ «առնել մշակութիւն արքունի:» Եւ այս է իսկական իմաստը ի հարկի կացութեան: Եղեշէն նոյն պատմութիւնն անելիս ասում է պարզօրէն՝ «Կտրեաց զնոցա ունչս եւ ականջս եւ ետ տանել յԱսորեստան զի կայցեն ի մշակութեան արքունի:» Դարձեալ կրկնում է զահճապետի բերանով՝ «եղեւ հրաման պատուհասիդ ձերոյ եւ ի վերայ զորին պատուհասի՝ երթալ ձեզ յԱսորեստան եւ լինել ձեզ մշակ յարքունիս:» Մի ուրիշ անգամ Եղիշէն նրանց պատիժը կոչում է «արքունի պատուհաս:»

Արտաքին աղբիւրներից յայտնի է, թէ ինչ էր արքունի մշակութիւնը: Այն ինչ որ այժմ կոչւում է հասարակաց կամ հանրօգուտ աշխատանքներ, իսկ մեր ժողովուրդն ասում է՝ թագաւորական բեկար: Ճանապարհներ շինել եւ պահպանել, ջրանցքներ բանալ եւ մաքրել, հեղեղների դէմ ամրարտակներ կանգնել, ուղեւորների համար օթեւաններ, կարաւանսարաներ, կառուցանել, կամուրջներ ձգել, պետական եւ արքունի շէնքերի վերայ աշխատել, դուցէ եւ արքունի կալուածներում, նաեւ հանքեր մշակել—ահա մի շարք աշխատանքներ, որ կատարւում էին արքունի կոչուած մշակների ձեռքով: Նրանք իրենց պետերն ունէին գործի դեկավարները, որ կոչւում էին karigbed. աւելին հին ձեւը լինելու է karikpet. ճիշդ այն գործավարներն են, մարդահարկերի վերայ նշանակուած, որ յիշում է Ղեւոնդ երէցը իր վերեւ յիշածս խօսքերում:

Ահա այն մշակները, որոնց հետ պիտի լծուէին մարմնաւոր տաժանքի եւ մեր երէցները: Պատմագիրը հաւատացնում է որ տեղացի քրիստոնեաները իրենց երաշխաւորութեամբ ազատ կացուցին Աբրահամին ծանր պատուհասից:

Պ. Մանանդեանը կարծում է որ «համերաշխիքը այն հարկերի համար էր, որ նրանից ստացուելու էր մինչեւ նրա վախճանը:» Ոչ, Փարպեցին ուրիշ բան է ասում: Երաշխաւորութեան գլխաւոր կէտը զանց է անում Պ. Մանանդեան, որ է «եւ կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորա:» Քրիստոնեաները,